իշխանութեան երկրպագել։ Դրա գլխաւոր պատճառն այն հոդերանութիւնն է, թէ Հայաստանն անպայման պէտք է կապւի Ռուսաստանի հետ, թէկուզ ստանան նստած լինի այնտեղ, և որովհետև այսօր Ռուսաստանը մեզ հետ կապւում է Ադրբէջանի վրայով, ուստի և ամենից առաջ Ադրբէջանի կառավարութիւնն է, որ քննադատութեան է ենթարկւում մեր կողմից։

Նոր կառավարութեան մասին պատգամաւոր Խոնդկարեանն ասաց, թէ իրօք զաւեշտ է կատարւում, այո՛, զաւեշտ է կատարւում և պարոնայք էսէրները լաւ պիտի գիտնան, որ զաւեշտն աւելի վտանգաւոր է և էլ աւելի վտանգաւոր է մշուշը, քան ցցած ժանիքը. փաստն եկաւ հաստատելու մեր ասածը։

Այդ կուսակցութիւնը, որի լոզունգներից մէկն է ազգերի ինքնորոշումը, ամէն անգամ ոտնահարում է իր սկզբունքները, երբ խնդիրը վերաբերում է Հայաստանին։ Փիլիսոփայական դատողութիւն են տալիս մեր ժողովրդի անկաշկանդ զարգացման մասին, առանց մտածելու, որ անկախութիւնն էլ այդ նպատակի հիմքերից մէկն է կազմում։

Պատգամաւոր Թումանեանի տոնը հրապարակին է սազում, բայց ոչ խորհրդարանին. նա հարց է տալիս, թէ ի՞նչ տւին իմպերիալիստները, է հարկէ, լաւ իմանալով թէ ինչ տւին։

Ես և Լիպարիտ Նազարեանը երբ Մոսկւայում բանակցում էինք Տրոցկու հետ, վերջինս մեզ ցոյց տւեց Եւրոպայի ճանապարհը, բայց ոչ եւրոպական դեմոկրատիայի, այլ խորհուրդ տւեց դիմելու իմպերիալիստ կառավարութիւններին։ Եւրոպան փրկեց մեր սովամահ ժողովրդին, դուք այդ շատ լաւ գիտէք։

Այնուհետև նոյն այդ բարեմիտ էսէրները վտանգի ժամին խորհուրդ են տալիս կառավարութեանը հրաժարւել իշխանութիւնից. այս բոպէին եթէ կառավարութիւնն ունի մի պարտք, այդ այն է, որ թոյլ չտայ նման քննադատութիւններով պառակտելու ազգի միահամուռ կամքը (բուռն ու երկարատև ծափահարութիւններ)։

Վ. Մինախորեան (սոց.–յեղ.). — Այստեղ յայտնեցին, թէ դաշնակից պետութիւնները մեզ հաց են տւել, բայց ինչո՞ւ, պարոնայք, մոռանում էք, որ այդ նոյն դաշնակիցները մեզնից արիւն են խլել։ Համոզւեցէք և ընդունեցէք, վերջապէս, որ ձեր քաղաքականութիւնը՝ կառչած մնալ Եւրոպայի փեշից...

Վ. Նաւասարդեան (դաշ.). — Կուլտուրայի և ոչ Եւրոպայի։

Վ. Մինախորեան (սոց.–յեղ.). — Այո՛, ձեր այդ քաղաքականութիւնը, նորից եմ կրկնում, կորստաբեր եղել է և կորստաբեր էլ պիտի լինի հայ ժողովրդի համար։ Մեզ մտահոգողը տւեալ հանգամանքներում մեր ժողովրդի ֆիզիկական գոյութեան խնդիրն է միայն և այս տեսակէտից կարծում ենք, որ վերջ պիտի տալ կնճռոտ հարցերը հայ–թրքական մեթոդներով վճռելու եղանակին և ամբողջովին պիտի յենւել յեղափոխական Ռուսաստանի վրա...

Վ. Խորէնի (դաշ.). — Բայց այդպիսի Ռուսաստան կա՞յ Բաղւում արդեօք...

Ա. Շիրինեան (դաշ.). — Ինչու չէ, ապա Սուլթանովը ի՞նչ է՝ «Մուսաւատ»–ի և «Իթթիհատ»–ի հետ միասին (ծիծաղ)։

Վ. Մինախորեան (սոց.–յեղ.). — Պէտք է յենւել յեղափոխական Ռուսաստանի վրա, եղբայրական ձեռք մեկնել նրան, որովհետև այլ ճանապարհ մենք ձեզ ցոյց տալ չենք կարող։